ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ 14-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ, 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ, 2-ՐԴ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻՆ ԵՎ 43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածին, 27-րդ հոդվածի 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերին եւ 43-րդ հոդվածին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված փվյալների՝ ներկայումս ՀՀ ընդհանուր իրավասության եւ վարչական դատարաններում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի հիման վրա 20-ից ավելի անավարտ գործեր են գտնվում դատական քննության փուլում, եւ կարեւորելով սահմանադրական սույն վեճի արագ լուծման անհրաժեշտությունը՝ գործի դատաքննությունն սկսել 2011թ. նոյեմբերի 15-ին, ժամը 11.00-ին,

բ/ գործով զեկուցող նշանակել սահմանադրական դատարանի անդամ Հ. Նազարյանին:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, հաշվի առնելով, որ փվյալ գործը ձեռք է բերել հասարակական մեծ հնչեղություն, գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով:

4. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն սույն գործով որպես պատասխանող կողմ դատաքննությանը ներգրավել ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն ընդունած մարմնին՝ ՀՀ Ազգային ժողովին:

5. Սույն գործի քննության հետ կապված՝ սահմանադրական դատարանի աշխատանքային ծանրաբեռնվածությունից ելնելով ս.թ. նոյեմբերի 8-ին նշանակված գործի դատաքննությունը տեղափոխել դեկտեմբերի 6-ին, ժամը 11.00-ին՝ ուժը կորցրած ճանաչելով ՀՀ սահմանադրական դատարանի 13.09.2011թ. ՍԴԱՈ-68 որոշման 1-ին կետը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 հոկտեմբերի 2011 թվականի
ՍԴԱՈ -73